

զած ատեն, ամենադժուարին հարցերը կը լուծէր ամենայն պարզութեամբ, չնորհիւ իր զննելու խորաթափանց կարողութեանը եւ իր հանճարին տարօրինակ փայլատակումներուն: Հակառակ այս բացառիկ ձիրքերուն ու կարողութեանը, իր հակառակորդները, կարծես անոր հանճարին ամբողջ լոյսէն չմոռած՝ տարօրինակ յամառութեամբ կ'ընդդիմանային անոր յայտնաբերած ճշմարտութիւնները որդեգրելու:

Այս մոլուցքէն բոնուած վիրաբոյժ մը՝ Պրոֆ. Կեռէն, չկարենալով հանդուրժել Փաստէօնի կուռ արամաբանութեան հարուածներուն, անպատկառօրէն կը համարձակէր բոունցքը բարձրացնել, հարուածելու համար մեծ գիտնականին անդամալոյժ ու վախճան մարմինը:

Վիճաբանութեան ներկայ եղողներուն կողմէ երբ կ'արդիւնէր այդ տմարդի աւարքը, Կեռէն՝ յաղուրդ տալու համար իր ցասումին՝ կը փութար մենամարտի հրաւէր կարգալ ու մինչեւ իսկ վկաններ զրկել:

Փաստէօն ամենայն պաղարիւնութեամբ կը խնդրէր անոնցմէ որ դիմեն զոյգ մը արդարասէր ակնատեսներու վճիռին: Դատաւորներէն մին կը նշանակուէր Բըժշկական Կաճառի մշտական քարտուղարը՝ Պարոն Պէկլառը, իսկ միւսը՝ առժամեայ քարտուղարը՝ Պարոն Պեոժրոն:

Փաստէօնի պաշտպանութիւնը յանձն կ'առնէր աշխարհահռչակ մանկաբարձ Լիւքա-Շամփոնիէնը, որ իր հրատարակած Բժշկական թերթին մէջ այս առթիւ հետեւեալ կերպով կ'արտայայտուէր. «Մենք կը հիանանք Պարոն Փաստէօնի քաղցրահամբոյր նկարագրին վրայ, որուն համար կ'ըսուի թէ ցասկոտ կոուսակ մըն է: Ահաւասիկ գիտնական մը, որ մերթ ընդ մերթ հակիրճ, հիւթեղ եւ խիստ շահեկան զեկուցումներ կ'ընէ:

Բժիշկ չէ, բայց իր հանճարէն առաջ-

նորդուած, նոր ճամբաներ կը բանայ բըժշկական գիտութեան ամենախրթին հարցերուն մէջէն: Փոխանակ ուշադրութեան եւ հիացումի երախտիքին արժանալու, որուն լիովին արժանի է, կըրուական հակումներ ունեցող քանի մը անհատներու սանձարձակ ընդդիմութեան կը բախի, որոնք շարունակաբար տրամադրուած են քանդելու՝ նուազագոյնը ունկընդիւնէ ետք: Երբ Փաստէօն կ'օգտագործէ գիտական բացատրութիւն մը, որ ամէն մարդ չի հասկնար, կամ եթէ պատահի որ բժշկական աստիճան մը քիչ մը անտեղի կերպով գործածելու ըլլայ, այն ատեն իր դէմը կը ցցուի անվերջանալի ճառերու ուրուականը: Այդ ճառերուն նըպատակն է ապացուցանել, թէ իրմէ առաջ (Փաստէօնէ) բժշկական գիտութեան մէջ ամէն ինչ լաւագոյն կերպով կ'ընթացնար: Փաստէօնի կողմէ ասոնց բանավէճ որակումը՝ խիստ մեղմ կը թուի մեզի»:

Այս դասուն պատկանող ուրիշ Բժիշկ մը եւս, Բժշկական Կաճառի ամպլոնէն կը բացաղանչէր. «Փաստէօնի հանդէպ մի միայն սա նկատումով կրնանք ներդաժիտ գտնուիլ՝ քիմիագէտ մըն է, որ օդատակար հանդիսանալու մարմնէն բոնուած, կ'ուզէ բժշկութիւնը բարեփոխել, որմէ բոլորովին անտեղեակ է»: Տարիներ ետքը, Վիւլլիան, որ հիացող մըն էր Փաստէօնի, այդ կարգի բարբառնալիքներուն ի պատասխան կ'ըսէր. «Պարոն Փաստէօնի պէս մարդ մը, որուն անկեղծութիւնը, ուղղամտութիւնն ու գիտական անշահախնդրութիւնը իբրեւ օրինակ կըրնան ծառայել իր հակառակորդներուն եւ բարեկամներուն, տեւականօրէն այսպիսի տղեղ յարձակումներու անթակայ է»:

Ապա խօսքը Փաստէօնի ուղղելով, կը շարունակէր. «Բոլոր ձեր վրայ հիացողները կը յուսան թէ այդ նպատակաւոր ու շահախնդիր յարձակումները՝ մի միայն ձեր արհամարհանքը կրնան գրգռել»:

Այս պայմաններուն մէջ Փաստէօն ըստիպում էր պայքարիլ ոչ միայն բնութեան դէմ, որուն պաղտնիքները հաղար ու մէկ դժուարութիւններով կարելի է քողարկել ընել, այլ նաեւ մարդկային չարակամութեան ու տգիտութեան դէմ, որոնց յաղթանակելու համար նոյնքան ճիգ եւ կորով պէտք էր սպառել, որքան առաջին պարագային:

Օր մը Փաստէօն այն աստիճան ընկճուած էր, որ սրտին խորքէն կը հառաչէր. «Երբեք չէի կարծեր թէ այսքան թշնամիներ ունիմ»:

Բայց Փաստէօն իբրեւ բնարան ունէր

հետեւեալ դաւանանքը. «Ինչ ասպարէզի ալ որ նուիրուիք, միշտ վեհ նպատակ մը հետապնդեցէք: Մեծ մարդոց եւ վսեմ գործերու պաշտամունքը ունեցէք»:

Այս բնարանին չնորհիւ, Փաստէօն կը յաղթէր թէ՛ բնութեան եւ թէ՛ մարդոց, ու այսպէսով ի յայտ կը բերէր բոլորովին անձանթ աշխարհ մը, ուր կ'ապրէին անսահմանօրէն փոքրիկ էակներու բազմութիւն մը, որոնք տարօրինակ թափով աճելով ու բազմանալով, տեւականօրէն մահ կը փոխէին շուրջներին:

Բժշ. Պ. ՄԻՍԱԲԵԱՆ

(Շարունակելի)

ՄԵՐ ՆԱԽՆԵԱՑ ՀԱՒԱՏՔԸ

ՏԻՐԱՄՕՐ ԱՆԱՐԱՏ ՅԳՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Յ Ա Ի Ե Լ Ո Ւ Ա Մ

(Շար. տե՛ս Բազմ., 1954, թիւ 5, էջ 155)

ՄԱՏԹԵՈՍ ՊՏՐՔ. ԵՒ ՏԵՐՈՅԵՆՑ

Մեր նախորդ յօդուածին վերջաւորութեան, ուսումնասիրելով 1800-էն սուրբին Տիրամօր Անարատ Յղութեան մասին յայտնուած կարծիքները Հայ Եկեղեցւոյ մէջ, յիշատակած էինք 1850-ի «Բրիտանիական» մը, Մոսկուա տպուած ու վաւերացուած էջմիածնի Կաթողիկոսէն: Այդ առթիւ մատնանշած էինք թէ ինչպէս մեր մէջ, 1854-ի Պապական վճիռէն առաջ, անխորի ընդունուած էր Տիրամօր Անարատ Յղութիւնը՝ կաթողիկէ եւ ոչ - կաթողիկէ հասարակութիւններէն: Ապա ակնարկելով արդի տարածաշրջաններուն, կ'աղաւաղէինք ներկայ կարգ մը եկեղեցական գրիչներու հակառակասէր ըն-

թացքը՝ պատմական այս տուեալներուն հանդէպ(1):

Աւելի լուսարանելու համար այս կէտը, կը ներկայացնենք այստեղ պատմական ուրիշ եղելութիւն մը, որ կու գայ հաստատել նոյնպէս մեր եզրակացութիւնները:

* * *

Մատթէոս Զուլխանեան, Պատրիարք Կ. Պոլսոյ (1844-1848), եւ ապա Կաթողիկոս էջմիածնի (1858-1865), ծանօթ է իբր հմուտ անձնաւորութիւն մը եկեղեցապատմական ու դաւանական հարցերու՝ իր

(1) Բազմ. ձժԲ. (1954), թ. 5, էջ 167-8:

ԲԱԶՄԱՎԵՊ



հրատարակութիւններով, որոնցմէ են զլիսաւորապէս «Հանդիսարան Ուղղափառութեան» (2) ու «Բարի մարդ եւ բարի քրիստոնէայ» (3) երկասիրութիւնները, երկուքն ալ լոյս տեսած՝ Պատրիարքութեան հրատարակած շրջանին: Երկու գործեր, որոնք «մեծ հռչակ ստացան — կ'ըսէ Օրմանեան — իրենց հմտական ճոխութեամբ, վկայութեանց եւ պատմական յիշատակաց առատութեամբ եւ կրօնական ուղղութեամբ» (4):

«Բարի մարդ եւ բարի քրիստոնէայ» գիրքը (1856-ին) ուղղուած էր զլիսաւորապէս բողոքական աղանդին դէմ (կաթողիկէներու դէմ ալ չեն պակսիր հատուածներ), խայտառակելու համար նորաղանդներու դաւանանքը, բարոյականը եւ քաղաքականը:

Բնական է բողոքականները կը խռովին ու չորս տարի վերջ, 1860-ին, ճիշտ յար եւ նման տիտղոսով գրքով մը կը հրատարակեն՝ ջատագովելով ինքզինքներն ու միաժամանակ փորձելով ցոյց տալ Մատթէոս Արքայի գրքին մէջ սպրդող Պեղադեան եւ ալ մոլորութիւններ եւ անհիմն զրպարտութիւններ (5):

Մինչ այդ, Մատթէոս Արքայ արդէն բարձրացած էր էջմիածնի Կաթողիկոսական Գահը: Ուստի բողոքականներու յիշեալ գրքովին պատասխանել կը ստանձնէ Պրուսացի Յովհաննէս Տէրոյենց, ըստ Օրմանեանի՝ «Բագմահմուտ կրօնագէտ» (6), որու գիրքը՝ «Բանադատ» տիտղոսով լոյս կը տեսնէ նոյն տարին, Պոլսոյ կրօնական ժողովին կողմէ տրուած վաւերացումի կնիքով (7):

(2) Հանդիսարան Ուղղափառութեան Հայոց եկեղեցւոյ: Կ. Պոլիս, տպ. Երեց Եղբարց Արապեան, 1854, էջ 495:

(3) Կ. Պոլիս, տպ. Յ. Միւհէնտիսեան, 1856, էջ 319:

(4) Ազգապատում. Հտ. Գ. էջ 3986: Երուսաղէմ, տպ. Ս. Յակոբեան, 1927:

Յիշեալ գրքովին մեղի համար հետաքրքրական էջեր կը պարունակեն, յայտնելով Տիրամօր Անարատ Յղութեան մասին որոշ զաղարկներ:

Բողոքականներու հրատարակած «Բարի մարդ...» գրքին մէջ, հեղինակը խօսելով Պապերու քաղաքական իշխանութեան հետզհետէ տկարանալուն վրայ, անոր կը հակադրէ Աստուածամօր հանդէպ բարեպաշտական հոսանքի մը աճումը՝ Լատին Եկեղեցւոյ մէջ, ու կը յարէ.

«Ասիկա է հիմա Պապականութեան միակ յոյսը, եւ Պապական հաւատոյ մասնը՝ վրայ յաւելցուցին Անարատ Յղութեան նոր վարդապետութիւնը: Մատթէոս Արքայիսկոյնս Աւետարանին վարդապետութեանը դառնալու փոխանակ՝ կուսակցեցաւ աւ նորոգ վարդապետութեանը» (8)

Տէրոյենց իր պատասխանին մէջ, այս առթիւ առանձին դուրս մը կը բանայ Տիրամօր Անարատ Յղութեան մասին, ու յետ մտորդապէս ներկայացնելու հակառակորդին վերոյիշեալ մոլորքը, ինքն ալ իր կողմէ կը յաւելու.

«Այսպէս ցուցնել կ'ուզէ այս ըսողը, որպէս թէ հայոց եկեղեցին անարատ յղութեանը չէր հաւատար առաջ, եւ միայն Մատթէոս արքայիսկոյնս կը հաւատայ, այն ալ Պիոս Թ. Պապին նոյն վարդապետութիւնը 1854-ին իբրեւ եկեղեցւոյ հաւատք հրատարակելէն ետք: Չգիտեմ այս բանիս վրայ հակառակորդը ի՞նչ խաբուած է, թէ ուրիշները խաբել կ'ուզէ:

Հայաստանեայց սուրբ եկեղեցին ամէն ատեն անարատ յղութեան վարդապետութեանը հաւատացած է. եւ ասոր ապացոյց է այն՝ որ Դեկտ. 9-ին ասոր տօնախմբութիւնը կը կատարէ: Սկզբնական մեղօք

(5) Բարի մարդ եւ բարի քրիստոնէայ: Կ. Պոլիս, տպ. Յ. Փափազեան, 1860, էջ 138:

(6) Ազգապատում. Անդ, էջ 3883:

(7) Կ. Պոլիս, տպ. Յ. Տէրոյենց, 1860, էջ 163:

(8) Բարի մարդ եւ բարի քրիստոնէայ. էջ 75:

շաղախելով որդի բարկութեան եւ աստուածային պատուհասի արժանի անձի մը յղութիւնը եկեղեցին չտօնէր»:

Այստեղ քանի մը տողով բացատրութիւն կու տայ՝ թէ Եկեղեցին ի՞նչ խմատով կը տօնէ Ս. Յովհաննէս Կարապետի յղութիւնն ու ծնունդը, որ բոլորովին տարբեր է Տիրամօր Յղութեան պարագայէն, ու կը շարունակէ.

«Սուրբ Կուսին անարատ յղութիւնը եկեղեցւոյ մէջ երգուած շարականներն ալ կ'իմացնեն, երբ վերափոխման տօնին առաջին օրուան մաշու շարականին մէջ՝ որ սուրբ Մովսէս Խորենացիին շինածն է Ե. դարուն՝ կ'երգեն. — անթառամ ծաղիկ, անդառապարտ շառաւիղ —: Գեղե՞նի տեսած բուրդին կը նմանցնեն, որ բոլոր աշխարհ աստուածային շնորհաց անձրեւն ազատ եղած ատենը՝ նոյն շնորհքը վրան իջաւ. եւ բոլոր տիեզերք մեղաց գիւղերիւնով քրջած ատենը՝ միմակ անիլա չոր մնաց: Մովսէս մարգարէին տեսած մարեմիին կը նմանցնեն, որ կրակի մէջ էր ու չէր այրեր:

Այս հաւատքը հիմնած է սուրբ աւետարանին պատմածին վրայ, որ հրեշտակը երբոր ս. Կուսին աւետիս բերաւ որ Բանն Աստուած անկէց պիտի մարմնանայ, տակաւին տեսան մերոյ մարմնանալէն առաջ սուրբ Կոյսը լի շնորհօք անուանեց. եւ թէ որ Տէրն մեր տակաւին սուրբ Կուսին արգանդը չեկած եւ Հոգին սուրբ անոր վրայ չիջած՝ շնորհքով լեցուն էր նէ, ե՞րբ եղած կ'ըլլայ այս շնորհաց լիութիւնը»:

Այստեղ դարձեալ քանի մը տողով բացատրութիւն կու տայ մեղքի տիեզերականութեան մասին, ծանօթութեան մը մէջ ստորեւ կը մեկնէ «լի շնորհօք» (= gratia plena) եւ «բերկրեալ» բացատրութիւններուն նոյնութիւնը եւ կը շարունակէ.

«Սրբազան Կաթողիկոսն ալ այս հա-

ւատքը սկիզբէն ունէր, եւ չէ թէ Պիոս Թ. Պապէն սորվեցաւ: Եւ կարծեմ հակառակորդին կարծեօք պէտք էր որ երբ յիշեալ Պապը այս վարդապետութիւնը հրատարակեց՝ սրբազանը ուրանալու եւ ասոր դէմ բրօքեալ ընելու էր, որպէսզի պապականներուն համաձայնած չըլլայ: Բայց ասիկա բողոքականներուն յատկութիւնն է, որոնցմէ եղան որ պապին հակառակելու համար՝ հոգւոյ անմահութիւնն ալ ուրացան, ինչպէս կը պատմէ Օտէն գաղղիացին:....

Մենք երբոր սուրբ եկեղեցւոյ հաւատատուն աւանդութեան համաձայն բանի մը բողոքականներուն ալ հաւատալը տեսնեմք՝ չեմք ուրանար» (9):

Արդարեւ շատ ակնյայտ է Տէրոյենցի այս յայտարարութիւնը, նկատմամբ Մատթէոս Արքայիսկ.ի (այս Կաթողիկոսի) դաւանանքին եւ Հայ Եկեղեցւոյ վարդապետութեան՝ ի մասին Տիրամօր Անարատ Յղութեան. այնուհանդերձ կ'ուզենք բոլորը ամփոփել չորս յատկանշական կէտերու մէջ, քանի մը խորհրդածութիւններով խառն.

1) Մինչ Տէրոյենց ուրիշ պարագաներու մէջ՝ ջատագովելով Մատթէոս Արքայիսկոյնս՝ ուղղակի կը հերքէ բողոքականներու անհիմն զրպարտութիւնները, այստեղ, այն է՝ Անարատ Յղութեան հարցին մէջ, կ'ընդունի բողոքականներու հաւատումը՝ թէ Մատթէոս Արքայ կը հաւատայ Անարատ Յղութեան:

Բայց մինչ բողոքականները իրենց այդ հաւատումով կ'ուզէին պախարակել Մատթէոս Արք.ը՝ իբր նորասէր եւ յարող Հոռմի նորեկուկ (ըստ իրենց) վարդապետութեան, Տէրոյենց կը փաստէ թէ Մատթէոս Արքայի ընթացքը համաձայն է Հայ Եկեղեցւոյ դաւանանքին, որ Պիոս Թ. Պապի 1854-ի վճիռէն առաջ, հինէն ի

(9) Բանադատ. էջ 33-37:

վեր կ'ընդունէր Տիրամօր Անարատ Յղութիւնը:

2) Այս դաւանանքին փաստերուն անցնելով, կը թուէ նախ եւ առաջ Դեկտ. 9-ի տօնախմբութիւնը, Յղութիւն Ս. Կուսին յԱննայէ: Արդարեւ, ինչպէս կը բացատրէինք մեր նախորդ յօդուածով, «տօնել Տիրամօր յղութիւնը՝ կը նշանակէ լոկալէս ընդունիլ Տիրամօր Անարատ Յղութիւնը Աննայէն» (10):

Փաստերու երկրորդ աղբիւր են, Տէրոյնցի համար, մեր շարականները, որոնց մէջ իր ուշադրութիւնը կը դրուէ Մ. Խորենացիի վերագրուած «Անթառամ ծաղիկ, անդատապարտ շառաւիղ» բացատրութիւնը, զոր մանրամասնօրէն վերլուծած ու մեկնած էինք, հանդերձ Վարդան Վրդ.ի հեղինակաւոր տողերով (11): Տէրոյնց կը մատնանշէ նաեւ շարականներու այն բացատրութիւնները՝ ուր Տիրամայրը կը նմանցուի Գեղէոնի հրաշատեսիլ բուրդին, կամ Մովսէս մարգարէի անբացակէց մորեմիին (12): Պատկերաւոր եւ ալլաբանական գեղեցիկ բացատրութիւններ, որոնք հաւանօրէն աւելի խորհրդանշէ են աստուածամայրութեան եւ կուսութեան դերադանց պարզելին:

Հուսկ փաստերու զօրաւորագոյնը, Աւետարանէն. հրեշտակի ողջունատուութեան խօսքը՝ «Լի շնորհօք» (13), հիմը կը կազմէ այս հաւատքին. ու Տէրոյնց կըրցած է հարցին աստուածաբանական անհերքելի արժէքը ներկայացնել այս տողերով:

3) Եղրակացութիւնն է՝ թէ Մատթէոս Արքեպս. 1854-էն առաջ կը հաւատար Տիրամօր Անարատ Յղութեան, ինչպէս կը հաւատար նաեւ Հայ Եկեղեցին դարերէ ի վեր: Ահա՛ թէ ինչո՞ւ Մատթ. Արքեպս. չբողոքեց Պապական վճիռին դէմ:

4) Այստեղ վեր հանելու ենք նաեւ Տէրոյնցի ողջամիտ ընթացքը. այն է, որ երբ Հռոմի Պապը հաւատքի հարց մը

վճռէ ու հրատարակէ, պէտք է՝ իսկոյն հակառակիլ եւ ուրանալ, պարզապէս անոր համար՝ որ հրատարակողն ու վճռողը Հռոմի Պապն է: Ասիկա Եկեղեցւոյ աւանդութեան դէմ մեղանշում մըն է, որ կ'առաջնորդէ քայքայումի եւ հողիներու ուծացման:

Երանի՛ր թէ Տէրոյնցի վերոյիշեալ տողերը իւրացնէին նաեւ անոնք, որ ներկայիս Հայ Եկեղեցւոյ ծոցին մէջ իսկ եկեղեցական բարձր դիրքերու հասած՝ անհիմն պատգամներ կու տան, ուրանալով Տիրամօր Անարատ Յղութիւնը, ու զայն նկատելով Հռոմի նորելուկ վարդապետութիւն մը, զոր իրը թէ Հայ Եկեղեցին ընդունած է երբեք: Այդ հեղինակները, զորս յիշատակած ենք մեր նախորդ յօդուածին մէջ (14) անշուշտ շատ լաւ պիտի դիտանան՝ թէ Քրիստոսի Եկեղեցին իր դաւանանքը դարէ դար չի փոխեր ու չի

(10) Բազմ. Անդ. էջ 165:

(11) Անդ. էջ 158-159, 162-163:

(12) Տէրոյնց կ'ակնարկէ շարականի հետեւեալ տողերուն, զորս կը թուենք այստեղ, նշելով Վենետիկեան 1898-ի տպագրութեան համապատասխան էջերը:

Ա.) «Այսօր գառիմֆն օրինակաւմն Յովակիմ եւ Աննա ետուն մեզ. գգեղմն ընդունիչ գցօղն երկնային» (էջ 991):

«Գեղմն իմանալի գոր ետես Գեղէովն յառաջ քան զայս հաւատացեալ, իմանալմ գանձաւի զծնունդ» (էջ 1097):

«Ուրախ լիք ամպ քեքեւ, գեղմն իմանալի...» (էջ 292):

Բ.) «Այսօր բուսաւ յԱննայէ մորեմին Մարիամ, յոր վառեցաւ հուրն աստուածային, գոր ետես Մովսէս գորինակ կուսին ի Սինա...» (էջ 991):

«Որ վառեցար ի յարփոյն եւ ոչ կիզար ըստ մորեմնոյն...» (էջ 237):

«Զքեզ որ ի մորեմնօքն, առ Մովսէսի մարգարէի, գնոր խորհուրդ կուսի յայտնեցեր...» (էջ 196, տե՛ս նաեւ էջ 281, 298):

(13) Ղուկ. Ա. 28:

(14) Բազմ. Անդ. էջ 167-168:

տարուբերի անհիմն խօսքերով, որոնք զուրկ են դրական հիմերէ եւ կը հակասեն մեր Եկեղեցւոյ դաւանական պատմութեան դրաւոր վկայութիւններուն: Եթէ մինչեւ դար մը առաջ մեր Եկեղեցին կը հաւատար Տիրամօր Անարատ Յղութեան, ինչպէս կը հաւատան պատմական փաստերը, զորս թուեցինք մեր նախորդ ու ներկայ յօդուածներուն մէջ, հիմա հայհոյանքի

պէս բան մը չէ՞ միթէ հանդիտապէս պատգամելը՝ թէ Հայ Եկեղեցին երբեք ընդունած չէ այս դաւանանքը (15):

Խոնարհի՛նք մեր նախնեաց լոյս – հաւատքին առջեւ. ատով մեծագոյն տուրքը եւ յարգանքը մատուցած կ'ըլլանք՝ մեր Ս. Հայրերուն, Սուրբ Եկեղեցւոյ, եւ նոյն ինքն Անարատ Յղացեալ Տիրամօր:

Հ. ՆԵՐՍԷՍ ՏԷՐ ՆԵՐՍԷՍԵԱՆ

(15) Հասկ, Ի. (1951), Թ. 1, էջ 21:

Մ. ԲԱՐՍԵՒ

ՀԱՅ ԶԵՆԱԳԻՐՆԵՐՈՒ ՀԱՒԱՔԱԾՈՆ

(Շար. տե՛ս «Բազմ.» 1954, Թ. 3-4 էջ 65)

20. — Հարց ու պատասխան խօսակցութիւն մը Գրիգորի եւ սուրբ Բարսղի մէջ, ձեռ. 251, թղ. 154ա-163ա, հաւատքի դըլխաւոր ճշմարտութիւններու վրայ. սկիզբը՝ «Բասիղ ասէ. Կարողութի՞ւն իցէ ար-

դեւը պատմել ինչ յաղագս որդւոյ...: Կարելի չեղաւ մեզի ասիկա նոյնացնել բսկըրնաւորութեան եւ վերջաւորութեան օղնութեամբ: Նոյնը կը դտնուի ձեռ. 1913 թղ. 136ա-145ա (40):

(40) Իււստին. ձեռ. 907 (927), Թ. 9 եւ ձեռ. 924 (944), Թ. 31, ճառ 19, Երուսաղեմ. ձեռ. 406, Գերբ պահօք, Թղ. 180 եւն, ճառ 20 եւ ձեռ. 1138, — Մեզի շատ հաւանական կը տեսնուի որ այս ճառը պէտք է նկատուի վերաբերող այդ զրական ձեւին որ ուսումնասիրած է Օ. F. Georg Heinrici իր Griechisch-Byzantinische Gesprächsbücher und Verwandtes aus Sammelhandschriften յօդուածով ի Abh. d. Königl. Sächs. Ges. d. Wissench., Ph. — H. Kl., XXVIII, 8: Կարելի է գտնել հայերէն ձեռագիրներու մէջ Հարցմունք Ս. Բարսղի առ Գրիգոր տիտղոսին տակ, շատ մը նոյնամեծ խօսակցութիւններ, Օրինակողներէն ոմանք Գրիգոր անուան տակ կարծեցին թէ կարող էին տեսնալ Գրիգոր Արանջեալագործը, ուրիշներ՝ Գրիգոր Նիսացին կամ Գրիգոր Նազիանզացին, Զ. ազգի մը նոյն իսկ Գրիգոր Լուսաւորեցի, Վերոյիշեալ Հարցմունքը կը գտնուին հետեւեալ ձեռագիրներու մէջ ալ. Երուսաղեմ. ձեռ. 73 (կամ 732), Նոր-Պայազիտ, Եկեղեցի Ս. Մարիամու, ձեռ. 27, Թղ. 222ա-229ա, Բարիգ. ձեռ. 121, Թղ. 107բ-108բ. ձեռ. 186,

Թղ. 219-224 կամ 223). ձեռ. 308, Թղ. 29-38 (կամ 37). ձեռ. 193, Թղ. 319-324 կամ 323) ձեռ. 306, Թղ. 290-303 (կամ 302), Թաւրիգ. Ձեռ. 46, Թղ. 41բ-45ա եւ 18, Թղ. 53ա-56բ, Սիւսի Բժշկեանի (1910թ.). նաեւ Ձեռ. 10, Թղ. 188ա-189բ եւ 11, Թղ. 219ա-236ա Թաւրիգի Առաջնորդարանի (տես Հ. Ա. ճառեան, Յուցակ Հայ Զեռագրացի Գրարէթ, Վիեննա 1910, էջ 110, 88, 53 եւ 54), Տփղիս. ձեռ. 12, Թղ. 239ա-240ա եւ Թղ. 242ա-250բ Արգար Յովհաննիսեանի 1903-ին (տես F. N. Finck, Յուցակ Հայ Զեռագրաց Արգար Յովհաննիսեանի Տփղիսէ, Leipzig-Marbourg, 1903) Վենետիկ. ձեռ. 1260, էջ 507-514. ձեռ. 171, էջ 501-505. ձեռ. 985 (Սարգս. 203) Թղ. 20ա-23բ. ձեռ. 305 (Սարգս. 235), Թղ. 84ա-87բ, ձեռ. 1091 (Սարգս. 245), Թղ. 83ա-84բ. ձեռ. 848 (Սարգս. 251), Թղ. 80բ-87բ. ձեռ. 245 (Սարգս. 260), Թղ. 8ա-9բ. ձեռ. 1541 (Սարգս. 263) Թղ. 1ա-4բ. ձեռ. 1491 (Սարգս. 277), Թղ. 2ա-10բ. ձեռ. 643 (Սարգս. 304), Թղ. 14բ-17ա, Վիեննա. ձեռ. 260, Թղ. 1ա-6բ. ձեռ. 345, Թղ. 86ա-90բ. ձեռ. 371, Թղ. 212ա-214ա,